



**«ԵՐԵՎԱՆԻ ՄԻՒԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**



Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2, հեռ. 060621238, 2-38, ss@ysmu.am

**«ԵՐԵՎԱՆԻ ՄԻՒԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 17
ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Երևանի Միսիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 55-րդ կետը, Երևանի Միսիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի գիտական խորհուրդը, լսելով ռեկտոր Ա.Ա. Մուրադյանի տարեկան ամփոփիչ հաշվետվությունը, ռեկտորի խորհրդական Ի.Ե.Աբգարյանի, մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի պետի տեղակալ Վ.Ե.Դանելյանի, իրավաբանական բաժնի պետ Մ.Ռ. Սողոմոնյանի կողմից ներկայացված որոշումների նախագծերը և գիտական քարտուղար Տ.Գ.Ավագյանի զեկուցումները,

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հավանություն տալ՝

- 1) ռեկտոր Ա.Ա. Մուրադյանի 2018 թվականի տարեկան ամփոփիչ հաշվետվությանը (18-12-17-01),
- 2) «Երևանի Միսիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 2019 թվականի բյուջեի նախագծին (18-12-17-02):

2. Հաստատել՝

- 1) «Երևանի Միսիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կառուցվածքային միավորների անվանակոչության կարգը (կցվում է) (18-12-17-03),
- 2) «Երևանի Միսիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի աշխատողների անձնական տվյալների պահպանության, օգտագործման կարգը (կցվում է) (18-12-17-04),
- 3) «Երևանի Միսիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի վարչական տարածքում տեսահսկման և տեսագրության իրականացնելու կարգը (կցվում է) (18-12-17-05),
- 4) «Երևանի Միսիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի մանդատային հանձնաժողովի աշխատակարգը (կցվում է) (18-12-17-06):

3. Հիմք ընդունելով «Ֆակուլտետի գործունեության օրինակելի կանոնակարգի» 52-րդ, 56-րդ կետերը, «Ամբիոնների և դասախոսական կազմի մասին կանոնակարգի» 25-րդ կետի 5-րդ, 6-րդ ենթակետերը և 26-րդ կետի ա) և գ) ենթակետերը, հաստատել հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը՝ հանրային առողջության ֆակուլտետի դեկանի, մանկաբուժության և



գինեկոլոգիայի թիվ 2 ամբիոնի և օտար լեզուների ամբիոնների վարիչների ընտրության արդյունքների վերաբերյալ և

1) Մարինե Գևորգի Հովհաննիսյանին ընտրված համարել հանրային առողջության ֆակուլտետի դեկանի պաշտոնում (18-12-17-07),

2) Լուսինե Արշալույսի Աբրահամյանին ընտրված համարել մանկաբարձության և գինեկոլոգիայի թիվ 2 ամբիոնի վարիչի պաշտոնում (18-12-17-08),

3) օտար լեզուների ամբիոնի վարիչի ընտրությունը ճանաչել չկայացած՝ թեկնածու Սվետլանա Ռուբենի Նալբանդյանի օգտին քվեարկության մասնակիցների ձայների կեսից ավելիի չքվեարկելու հիմքով (18-12- 17-09):

4. Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը ֆարմացիայի ամբիոնի դոցենտ, ք.գ.դ Կարինե Սերյոժայի Մարգարյանին շնորհել պրոֆեսորի գիտական կոչում՝ որոշումը սահմանված կարգով ներկայացնելով ՀՀ ԲՈԿ-ի հաստատմանը (18-12-17-10):

5. Որոշումների կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

ՆԱԽԱԳԱՀ՝

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Բ.Գ.Դ. ՊՐՈՖ. Ա.Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բ.Գ.Դ. ՊՐՈՖ. Տ.Գ. ԱՎԱԳՅԱՆ